CFLI/FCIL
Canada Fund for Local Initiatives
Fonds canadien d'initiatives locales

COAF CHILDREN OF ARMENIA FUND

ՔՈԱՖ-ը եւ Կանադայի դեսպանատունը կանանց հզորացման ծրագիր են իրականացրել:

ԵՐԵՎԱՆ, 19 Մարտի, 2023: Դեբետ գյուղի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում տեղի է ունեցել Տարածքային նախաձեռնությունների կանադական հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից համատեղ իրականացված «Աշխատանքային հմտությունների զարգացման եվ հյուրընկալության ոլորտում աշխատանքի տեղավորման միջոցով աջակցություն Լոռիում խոցելի խմբերի կանանց» ծրագրի փակման պաշտոնական արարողությունը: Ծրագրի հիմնական նպատակներից են Լոռվա մարզում աշխատաշուկայի գենդերային համաչափության բարելավումն ու կանանց համար հեռանկարային աշխատանքի առկայության ապահովումը:

Ծրագիրն աջակցել է 30 շահառուների, որոնցից 29-ը կին են, տալով նրանց մասնագիտական գիտելիքներ հյուրընկալության, ռեստորանային և հյուրանոցային սպասարկման և խոհարարական արվեստի ոլորտներից: Մասնակիցներն անցել են հատուկ հնգամսյա դասընթաց ոլորտի առաջատար հաստատություններում: Տեխնիկական գիտելիքներից զատ, մասնակիցները նաև անցել են օտար լեզուների, ինչպես նաև գենդերային հավասարության և սոցիալական ներգրավվածության դասընթաց, ինչի շնորհիվ նրանք ավելի հեշտ կկարողանան հաղթահարել մի շարք մարտահրավերներ, որոնց կանայք բախվում են ամենօրյա աշխատանքի ժամանակ: Դասընթացը համակարգել է ՄԱԿ-ի գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույցի ներկայացուցիչը:

Ծրագրի ավարտից հետո 24 մասնակիցներ արդեն իսկ ստացել են աշխատանքի առաջարկներ մի շարք կազմակերպություններից, որոնք նույնպես գործունեություն են ծավալում Լոռիում: Ծրագրի մյուս մասնակիցներն ակտիվ ուսումնասիրում են աշխատաշուկան և շուտով նույնպես կանցնեն աշխատանիք, քանզի նման գիտելիքներով մասնագետները մարզում եզակի են: ՔՈԱՖ-ը նաև համագործակցել է մարզում աշխատող թվով յոթ կին-ձեռներեցների հետ՝ մասնակիցների հետագա մասնագիտական աճն ու կայուն աշխատանքն ապահովելու համար: Լոռիում գործող մի շարք հյուրատներ և հանգստյան տներ շուտով կհամալրվեն բարձարակարգ մասնագետներով: Մասնակիցներից շատերը

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

նաև կանցնեն հետծրագրային պրակտիկա ՔՈԱՖ-ի «Քոնսեփթ հյուրանոցում» և հանրագումարների կենտրոնում, ինչպես նաև «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում:

Ծրագրի բարեհաջող ավարտը տոնելու համար, ՔՈԱՖ-ի ՍՄԱՐԹ կենտրոնում տեղի է ունեցել թեմատիկ պանելային քննարկում, որը վարում էր ՀՀ Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, իսկ խոսնակների շարքում էին ՀՀ-ում Կանադայի դեսպան Ն.Գ. Էլիսոն Լըքլերը, ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը, ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի տնօրեն Նարինե Թերզյանը, ՀՀ Զբոսաշրջության կոմիտեի նախագահ Սիսիան Պողոսյանը և Լոռիում հյուրընկալության ոլորտի ձեռներեց Մարինե Դավթյանը: Քննարկման ընթացքում վեր հանվեցին մի շարք կարևոր հարցեր, հատկապես աշխատաշուկայում կանանց համար հավասար պայմանների ապահովման օրակարգում: Հայաստանում կանանց գործազրկությունը շարունակում է մնալ բարձր մակարդակի վրա: «Կարևորագույն քայլերից մեկը, ինչի ուղղությամբ աշխատում է նաև մեր կառավարությունը, խոչընդոտների վերացումն է, ինչը թույլ կտա կանանց պարզապես իրագործել իրենց ունեցած պոտենցիալի 100 տոկոսը», - նշեց ՀՀ-ում Կանադայի դեսպան Էլիսոն Լըքլերը:

###

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 66 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:

CFLI-ի մասին

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամը (CFLI) ֆինանսավորում է փոքրածավալ, սակայն մեծ ազդեցություն ունեցող ծրագրեր ավելի քան 120 երկրներում, որոնք համապատասխանում են զարգացման պաշտոնական աջակցության ստանալու պայմաններին: CFLI-ի տարեկան ծրագրային բյուջեն կազմում է 26,8 մլն ԱՄՆ դոլար, իսկ յուրաքանչյուր նախագծի միջինը՝ 31,000 ԱՄՆ դոլար: Նախագծերը պլանավորվում և իրականացվում են հիմնականում տեղական կազմակերպությունների կողմից և ընտրվում ու հաստատվում են Կանադայի համապատասխան դեսպանատան կամ Գերագույն հանձնաժողովի կողմից:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076